ՈՏՆԱԳՆԴԱԿ

Այսօր պիտի խօսինք մեզմէ շատ շատերուն սիրելի խաղին՝ ոտնագնդակին, ծագումին մասին:

Ոտնագնդակը խաղ մըն է, որուն ընթացքին իւրաքանչիւր խումբի անդամներուն նպատակն է՝ հնարաւորին չափ շատ գնդակ մտցնել մրցակիցին դարպասը:

Անուանումը անգլիական է, foot (ոտք) եւ ball (գնդակ): Այս անուանումը պահպանուած է նաեւ Ֆրանսայի, Սպանիոյ, Հայաստանի, Ռուսիոյ, եւ այլ երկիրներ:

ԱՄՆ-ի մէջ աւելի շատ տարածուած է ամերիկեան ֆութպոլը, իսկ իսկական ֆութպոլը ամերիկացիները կ՝անուանեն՝ (soccer):

Մարդիկ ֆութպոլ խաղցած են հին դարերու միջնադարեան եւրոպայի քաղաքներու փողոցներուն եւ հրապարակներուն մէջ: Այդ ժամանակ ֆութպոլը հրապուրիչ էր եւ հիմնական պատճառը կանոններու բացակայութիւնն էր, խաղցողներուն թիւը անսահման էր եւ կը խաղային ոչխարի մորթէ պատրաստուած (ոչ կլոր) գնդակներով:

19-րդ դարու 20-ական թուականներուն առաջին փորձը եղած է որոշակի կանոններ մշակելու սկզբունքային հարցի մը՝ խաղալ միայն ոտքերով, թէ՞ ձեռքերով եւս:

Հարցին միանշանակ պատասխան չտրուեցաւ եւ վէճը տարիներ յետաձգուեցաւ:

1863 Հոկտեմբեր 1-ին Լոնտոնի մէջ կազմակերպուեցաւ բարձրագոյն դպրոցներու հաւաք մը, ուր ձայներու մեծամասնութեամբ յաղթեցին միայն ոտքով խաղի կողմնակիցները: Միւսները հեռացան եւ կազմակերպեցին նոր խաղատեսակ մը: Իսկ մաքուր ֆութպոլի հետեւորդները մշակեցին խաղին 13 յօդուածներէ բաղկացած կանոնագրութիւնը, որ հրապարակուեցաւ 1863 Դեկտեմբեր 1-ին եւ հետագային արժանացաւ համընդհանուր ճանաչման:

Թիւը պատրաստեց՝ Մարմանդ Աշտեան-Ղազինեան
Նկարազարդեց՝ Ռաֆֆի Քէշիշեան

ԻՄԱՍՏՈՒՆ ԶԻՆՈՒՈՐԸ



Իմաստուն բայց կաղ զինուոր մը պատերազմի կ՝երթար: Իր գունդին մէջ գտնուող զինուորներէն մէկը ըսաւ.

– Ո՛վ ողորմելի՛, ո՞ւր կ՝երթաս: Քեզ իսկոյն կը սպանեն, որովհետեւ չես կրնար փախչիլ:

Կաղ զինուորը պատասխանեց.

– Ո՛վ անմի՛տ, ես փախչելու համար չէ որ պատերազմի կ՝երթամ, այլ՝ կռուելու եւ յաղթելու:

Վարդան Այգեկցի

Դիտէ՛, կարդա՛, լսէ՛ եւ ընտրէ՛՝ այո կամ ոչ:

Հովը կը փչէ:	ԱՅՈ	ՈՉ
Երկու թռչուններ կան:	ԱՅՈ	ՈՉ
Թռչունները կարմիր են:	ԱՅՈ	ՈՉ
Հեծիկը ծառին տակն է:	ԱՅՈ	ՈՉ
Աղջիկը ծաղիկներուն միջեւ կեցած է:	ԱՅՈ	ՈՉ
Տղան ծառին տակն է:	ԱՅՈ	ՈՉ
Աղջիկը կարմիր շապիկ հագած է:	ԱՅՈ	ՈՉ
Աղջկան մազերը սեւ են:	ԱՅՈ	ՈՉ

Ամբողջացո՛ւր հետեւեալ գծագրութիւնը, ապա՝ գունաւորէ՛ նախասիրած գոյներովդ:

ԿՏՑԱՀԱՐՈՒԱԾ ՍԻՐՏԸ

Անգամ մը երեկոյեան դիմակահանդէսի ընթացքին, սիրահարուած ասպետ մը կը հարցնէ իր սիրած աղջկան.

– Գեղեցկուհի՛, դուն ե՞րբ զիս պիտի սիրես:

– Երբ որ ինծի բերես ոսկեայ այն ծաղիկը, որ կ՚երգէ արեւածագին:

– Լա՛ւ, ցտեսութի՛ւն, Ս. Փիլիպոսին օրը սպասէ՛ ինծի ձեր տան շեմին:

Իրապէս ալ Ս. Փիլիպոսին օրը, գեղեցկուհին իր տան դիմաց կը սպասէր սիրահարուած ասպետին:

– Բարե՛ւ, գեղեցկուհի՛, ահա՛, բերի արեւածագին հետ երգող ոսկեայ ծաղիկը: Ըսէ՛, որ զիս կը սիրես:

– Ասպե՛տ, ես քեզ կը սիրեմ, բայց Աստուա՛ծ իմ, որքան գունատ դարձեր ես:

– Արդեօք զարմանալի՞ է, որ գունատ եմ: Ոսկեայ ծաղիկը պաշարուած էր հարիւր սեւ գայլերով, անոնք այնպէս բզքտեցին զիս, որ արեանս կէսը կորսնցուցի: Հիմա ըսէ՛ գեղեցկուհի՛, ե՞րբ պիտի կատարուի մեր նշանադրութիւնը:

– Երբ որ բերես երկնագոյն այն թռչունը, որ միշտ ճշմարտութիւնը կը խօսի:

– Ցտեսութի՛ւն, գեղեցկուհի՛: Ս. Ռոխին օրը ինծի սպասէ՛ ձեր տան շեմին:

Իրապէս ալ Ս. Ռոխին օրը, գեղեցկուհին իր տան դիմաց կը սպասէր սիրահարուած ասպետին:

– Բարեւ, չքնա՛ղ աղջիկ, ահա՛, բերի երկնագոյն խօսող թռչունը: Ըսէ՛, վերջապէս ե՞րբ պիտի ամուսնանանք:

– Ասպե՛տ, կ՚ամուսնանանք երբ գտնես արծիւներու արքան եւ վանդակի մը մէջ բերես յանձնես ինծի: Բայց... Աստուա՛ծ իմ, որքան տխուր ես:

– Այո՛, տխուր եմ, որովհետեւ երկնագոյն թռչունը ըսաւ, որ դուն զիս չես սիրեր:

– Ստախօ՛ս թռչուն, ես հիմա պիտի հրամայեմ, որ փետուրներդ հանեն եւ տապկեն քեզ:

– Ցտեսութի՛ւն, սիրուհի՛ս, Ս. Ղուկասին օրը սպասէ՛ ինծի ձեր տան շեմին:

Ս. Ղուկասին օրը, չքնաղ աղջիկը իր տան դիմաց կը սպասէր ասպետին վերադարձին:

– Մայրի՛կ, մայրի՛կ, ասպետը չվերադարձաւ:

– Նստէ՛ եւ ընթրէ՛ դստրիկս, ան ընթրիքի ատեն կը վերադառնայ:

Ընթրիքէն ետք, գեղեցկուհին դարձեալ սպասեց տան շեմին.

– Մայրի՛կ, մայրի՛կ, ասպետս տակաւին չհասաւ:

– Քնացի՛ր, ասպետդ կանուխ առաւօտեան վերադարձած կ՚ըլլայ:

Գեղեցկուհին մտաւ անկողին, բայց կէս գիշերին կամացուկ մը տունէն դուրս եկաւ դիմաւորելու իր ասպետը:

– Բարե՛ւ, իմ չքնա՛ղ, արծիւներու արքան ինձմէ զօրաւոր էր: Թերեւս ուրիշը կրնայ զինք մօտդ բերել:

– Ասպե՛տ, այդ ի՞նչ կարմիր անցք բացուած է կուրծքիդ վրայ:

– Այնտեղ սիրտս կար: Արծիւներու արքան կտցահարեց-հանեց զայն: Մենք երբեք պիտի չամուսնանանք... երբե՛ք...

Այս խօսքերը ըսելով, ասպետը սուզուեցաւ խաւարին մէջ: Իսկ գեղեցկուհին՝ յաջորդ օրն իսկ կտրեց իր չքնաղ վարսերը, հագուեցաւ սեւ զգեստը եւ անգամ մըն ալ զայն չհանեց:

ՄԵԾ ԱՐՈՍ

Մեծ արոսը ամենէն մեծ թռչուններէն մէկն է, որ ժամանակին տարածուած էր ամբողջ աշխարհի կողմերը, սակայն այսօր՝ զայն կարելի է տեսնել միայն Ասիոյ եւ Եւրոպայի մէջ:

Չնայած անոր հսկայ մարմնին, ան շատ լաւ կը թռչի եւ ունի զօրաւոր թաթեր, որոնցմով արագօրէն կը վազէ: Վտանգի պահուն մեծ արոսը կը նախընտրէ իր թաթերուն միջոցաւ վազել ու փախչիլ, ոչ թէ թռչիլ:

Գարնան Մեծ Արոսին էգը կ՚ածէ 2 (երբեմն 3) դեղին-կանաչ գոյնով հաւկիթներ, որոնց վրայ կը մնայ մէկ ամիս եւ բնաւ չի բաժնուիր իր ապագայ ձագերէն:

Ծնելէն անմիջապէս ետք, ձագերը դուրս կու գան բոյնէն եւ կը սկսին քալել, իսկ աւելի ուշ, երբ անոնց մարմինը աւելի կ՚ամրանայ, մայր արոսը զիրենք կը տանի բաց տարածութեամբ վայրեր եւ հոն կը սորվեցնէ բուսական սնունդ ստանալ, ինչպէս նաեւ որդեր (կամ միջատներ) որսալ: